ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» հոկտեմբեր 2013 թ. N 03

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս (Էջմիածին) գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի հունվարի 24-ի N9 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի (Էջմիածին) գյուղապետարանի աշխատակազմին տրամադրված հողի հարկի և գույքահարկի գանձման կտրոններով գանձումների և գանձապետական հաշիվների մուտքագրված գումարների համապատասխանության ուսումնասիրության նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս (Էջմիածին) գյուղական համայնքի ղեկավարին և գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Գ. Հովհաննիսյանին (համաձայնությամբ):
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2013 թվականի փետրվարի 22-ի
N 23 կարգադրության

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.

Անդամներ՝

Յու. Մանվելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.

Գ. Գևորգյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**